# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2018-2019 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ

## <ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ> ՀՈԱԿ ՈՒՄ

## ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

### Ընդհանուր տեղեկատվություն մանկապարտեզի մասին

<ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ իրավաբանական *անձի* կարգավիճակ ունեցող, շահույթ չհետապնդող համայնքայի*ն ոչ* առևտրային կազմակերպություն է, իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նախադպրոցական ծրագրեր, կանոնադրությամբ ամրագրված իրավունքներ և պարտականություններ՝ հաստատված համայնքի ավագանու կողմից։

Մանկապարտեզի շենքը տիպային է, ունի երեք մասնաշենք, մեծ կանաչապատ բակային տարածք, երաժշտության դահլիճ:
<ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ> ՀՈԱԿ-ում գործում է 4 խումբ։ Մանկապարտեզում հաշվառված է թվով 150 երեխա։

2018-2019 ուս. Տարում մանկապարտեզի երեխաների միջին հաճախելիությունը կազմել է 126 երեխա։

Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 26 հունվարի 2007թ. N 29-Ն հրամանի ՀՀ Պետական և Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակի մանկապարտեզի մանկավարժական անձնակազմը համալրված է համապատասխան բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցող մասնագետներով՝ մեթոդիստ, դաստիարակ, երաժշտության դաստիարակ, ֆիզ. Դաստիարակ, պարուսույց։

Նախադպրոցական ուս. հաստատության աշխատանքը իրականացվել է հաստատության կանոնադրության և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ինչպես նաև հաստատության տարեկան աշխատանքային պլանին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախադպրոցական կրթական համալիր ծրագրով։

Երեխաների սննդով մատակարարում են մանկապարտեզի դաստիարակների կողմից կազմակերպվող միջոցառումները։Հրապարակ կազմակերպելով երեխաների առօրյան նրանք նպաստում են մանուկների ազատ և ներդաշնակ բազմակողմանի զարգացմանը:

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- 2018-2019 ուս. Տարում կատարվել է տարեկան աշխատանքային պլանով նախատեսված 4 մանկավարժական խորհրդակցության նիստերը
/ձևվել է արձանագրություններ և համապատասխան զեկուցումներ/

- Տարվա ընթացքում կատարվել է տարվա միջոցառումների ժամանակացույցով պլանավորած 15 միջոցառում / տարիքային բոլոր խմբերում/
- Կատարվել է 22 սեմինար պարապմունք
- Կատարվել է 8 թեմատիկ ստուգում
- Կատարվել է 18 մեթոդ ժամ
- Կատարվել է օպերատիվ ստուգում/ տարիքային բոլոր խմբերում/
- Կատարվել է դիտարկում/ տարիքային բոլոր խմբերում/
- Անցկացվել է 3 ընդհանուր ծնողական ժողով/ առկա է արձանագրությունները և [illegible]
- Անցկացվել է 12 խմբակային ժողով /առկա է արձանագրությունները և զեկուցագրերը/
- 2018-2019 ուստարում առ 01. 02. Մանկապարտեզ հաշվառված է եղել 180 երեխա, որից սեպտեմբեր ամսին դպրոց է գնացել 41 երեխա, նախակրթարան է գնացել 8 երեխա, բնակության վայրը փոխելու նպատակով ազատվել է մանկապարտեզից 3 երեխա:
- 2018-2019 ուստարվա առ 01. Սեպտեմբերի Մանկապարտեզում հաշվառված է թվով 150 երեխա, մանկապարտեզի երեխաների միջին հաճախելիությունը կազմել է 126 երեխա:

## ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

- 2018-201 9ուստարում Ծնողներն իրազեկվել են մանկապարտեզի կանոնադրությանը և նոր ծրագրային պահանջներին
- Կնքվել է պայմանագիր նոր ընդունված երեխաների ծնողների հետ
  Ընտրվել է ծնողկոմիտե և նախագահ

- մանկապարտեզի խնդիրների հետ կապված անցկացվել է հարցում ծնողների հետ՝ հարցաթերթիկների միջոցով:

## ԱՇԽԱՏԱՆՔ ԲՈՒԺՔՐՈՋ ՀԵՏ

- Կատարվել է սննդի նորմերի վերլուծություն
- Կատարվել է ամսական վերլուծություն երեխաների հիվանդացության վերաբերյալ, փաստաթղթերի վարման վերլուծություն՝ ըստ խմբերի:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

<ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ> ՀՈԱԿ-ի ֆինանսավորումը իրականացվում է Վեդու քաղաքային համայնքի բյուջեից: 2018թ. Վեդու համայնքապետարանը տրամադրել է 27.150.000/ քսանյոթ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար /ՀՀ դրամ, որից ծախսվել է

| | Տարեսկզբին հաստատված նախահաշիվ | Տարեվերջին Ծախսված գումար |
|---|---|---|
| Աշխատակիցների աշխատավարձ | 18600.0 | 18275.0 |
| Ծառ. Միջոց, սնունդ | 5500.0 | 6355.7 |
| Տնտեսական | 400.0 | 350 |
| Գրենական | 100.0 | 100 |

| | | |
|---|---|---|
| Այլ կոմունալ ծառ. | 200 | 200 |
| Է. էներգիա, գազ | 800.0 | 800 |
| Կապ | 125.0 | 125.0 |
| Դեղորայք | 20.0 | 20.0 |
| Գույքի ձեռք բերում | 210 | 210 |
| Գազի սպասարկում | 55.0 | 52.3 |
| | | |

ԿԱՐԳԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- 2018թ մանկապարտեզը ձեռք է բերել նոր ջրատաքացուցիչ, ավտոմատ լվացքի մեքենա:
- Ձեռք է բերվել ներկեր՝ մանկապարտեզի միջանցքի պատերի և խմբասենյակների համար
- Մասնակի վերանորոգվել է խմբերի պահարաններն և աթոռները ․
- Վեդու համայնքապետարանի և <ՖԱՍՏ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ> ՈՒՎԿ ՓԲԸ աջակցությամբ ս/թ սեպտեմբերին մանկապարտեզը ձեռք է բերել կոշտ և փափուկ գույք՝ մահճակալներ, սեղաններ, աթոռներ, մանկական անկողնային պարագաներ, ծածկոցներ, մանկական սպասք:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Մանկապարտեզի երկրորդ և երրորդ մասնաշենքը՝ խոհանոցը, դահլիճը լվացքատունը ունեն խիստ վերանորոգման կարիք. պետք է փոխվի տանիքը և պատուհանները, անցկացվի լոկալ ջեռուցման համակարգը:
2. Պետք է ձեռք բերվի խոհանոցի կոշտ գույք՝ սանիտարական նորմերի պահանջներին համապատասխան՝
3. Մանկապարտեզի բակը կարիք ունի ոռոգման ցանցի:

Մանկապարտեզի տնօրեն՝ Վարդուհի Հարությունյան